ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 սեպտեմբերի 2015 թվականի թիվ 173 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 38-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. օգոստոսի 31-ի 1/32.2/12506-15 հանձնարարականը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2009 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 38-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կանոնադրության «Բաժնի գործառույթները» մասի 5-րդ կետի 10-րդ ենթակետից հետո ավելացնել նոր՝ 10.1 ենթակետ.

«10.1 Ցուցաբերում է աջակցություն համայնքների ղեկավարներին համայնքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2015թ.սեպտեմբերի 7
ք.Իջևան